ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի 30.04.2024թ. նիստի

ք.Երևան 30.04.2024թ.

Նախագահությամբ Լ.Պետրոսյանի

քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝Գևորգ Ավագյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան*
6. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդի նիստը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Օրակարգում՝

1. *<<Մանկության Գործերով Կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպությանն անդամագրվելու՝ Վաղինակ Արմենակի Էլոյանի դիմումի քննարկում:*
2. *<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի կազմակերպման, անցկացման և օրակարգի մասին :*
3. *Ընթացիկ հարցեր :*

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահ Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով և ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը, այն է՝ Դիտորդ խորհրդին է դիմել Վաղինակ Արմենակի Էլոյանը <<ՍԳԿԿ>> ԻԿ-ին անդամագրվելու համար: Նա ներկայացրեց, որ ուսումնասիրել է դիմորդի կողմից ներկայացված փաստաթղթերը և եկել այն եզրակացության, որ Վաղինակ Էլոյանը համապատասխանում է <<ՍԳԿԿ>> ԻԿ-ին անդամագրվելու համար:

1.Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին նաև Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը, Վահագն Ավագյանը, Խաչիկ Նազարյանը և Տիգրան Սահակյանը:

<<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Վաղինակ Արմենակի Էլոյանին 2024թ. ապրիլի 30-ից անդամագրել <<ՍԳԿԿ>> Ինքնակարգավորվող կազմակերպության կազմում:

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն:

2.Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը, այն է՝ 2024թ. մայիսին պետք է կայանա <<ՍԳԿԿ>> ԻԿ տարեկան հաշվետու Ընդհանուր ժողովը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024թ. նոյեմբերին նույնպես պետք է հրավիրվի Ընդհանուր ժողով, որտեղ պետք է կատարվի <<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի. Կարգապահական հանձնաժողովի և Վերահսկիչ ծառայության անդամների ընտրություն, միաժամանակ հաշվի առնելով կառավարիչների ծանրաբեռնված լինելու հանգամանքը և վեց ամիսը մեկ /կամ տարին երկու անգամ/ Ընդհանուր ժողով չհրավիրելու նպատակով առաջարկում եմ 2024թ. մայիսին կայանալիք տարեկան հաշվետու Ընդհանուր ժողովը հետաձգել և կազմակերպել 2024թ. նոյեմբեր ամսին:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին նաև Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը, Խաչիկ Նազարյանը, Վահագն Ավագյանը և Տիգրան Սահակյանը:

<<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

<<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության տարեկան հաշվետու Ընդհանուր ժողովը հետաձգել և կազմակերպել 2024թ. նոյեմբեր ամսին :

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն:

Նախագահ՝ Լ.Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Հովսեփյան